«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի Ֆեդերացիայի
գործադիր տնօրեն՝ Ա. Գևորգյան
«23» հոկտեմբեր 2026թ.

ՀՀ կանանց առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

Կանոնադրություն

Անցկացման վայրը՝ ք. Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա (Շևչենկո34)
Ժամկետները՝ սեպտեմբերի 2-ից 11-ը

Մասնակիցները՝ մասնակցության իրավունք ունեն երկրորդ, առաջին կարգային և մինչև 2001 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստուհիները:
Մրցակարգը՝ շվեյցարական մրցակարգ, 9 խաղափուլ:
Ժամակարգը՝ 90 րոպե յուրաքանչյուր մասնակցին մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:
Խաղի մեկնարկից 30 րոպեից ավել ուշացած մասնակցին կգրանցվի պարտություն և տվյալ մասնակիցը կհեռացվի մրցաշարից:

Լրացուցիչ ցուցանիշներ՝ հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը որոշվում են ըստ.

1. Հատված Բուխհոլց -1 ցուցանիշի
2. Բուխհոլցի ցուցանիշի
3. Անձնական հանդիպման արդյունքի
4. Սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
5. Հաղթանակների առավելագույն քանակի

1-10-րդ տեղերը գրաված շախմատիստուհիները իրավունք կստանան մասնակցելու Հայաստանի կանանց 2027թ. առաջնության առաջին խմբի մրցաշարին:

Մրցաշարի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է օգոստոսի 25-ը
Բոլոր մասնակիցները պետք ունենան ՖԻԴԵ-ի նույնականացման համար (FIDE ID)

Մրցաշարի ընթացքում մարզերը (30կմ. և ավել) ներկայացնող մրցավարների սննդի և գիշերակացի, բժշկի սննդի ֆինանսավորումը կատարվում է ԿԳՄՍ «Պետական աջակցություն մարզական ֆեդերացիաներին» ֆինանսական միջոցների հաշվին:

Մրցաշարի ընթացքում մարզերը ներկայացնող մարզիկների սննդի, գիշերավարձի և ճանապարհածախսի, ինչպես նաև ուղեկցող մարզիչների բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:

Խաղացանկ

02.09.2026	1-ին խաղափուլ	15:00
03.09.2026	2-րդ խաղափուլ	15:00
04.09.2026	3-րդ խաղափուլ	15:00
05.09.2026	4-րդ խաղափուլ	15:00
06.09.2026	5-րդ խաղափուլ	15:00
07.09.2026	6-րդ խաղափուլ	15:00
08.09.2026	7-րդ խաղափուլ	15:00
09.09.2026	8-րդ խաղափուլ	15:00
10.09.2026	9-րդ խաղափուլ	11:00
11.09.2026	Մեկնում	

Գրանցման համար անցնել հետևյալ հղումով.

https://forms.gle/ZwXeZbqy3WiRA2vn6

Հարցերի դեպքում զանգահարել՝ 099 440105